ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 686-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

1.1. Էկոնոմիկայի նախարարության խաղային գործի կարգավորման վարչության (այսուհետ՝ Վարչություն) **պետ** (ծածկագիրը՝ 23-32.27-**Ղ3-1**):

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Էկոնոմիկայի նախարարին (այսուհետ՝ Նախարար):

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության բաժինների (այսուհետ՝ Բաժին) պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժինների պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մ.Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Կազմակերպում է շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների, վիճակախաղերի կազմակերպման գործունեությունների (այսուհետ՝ Գործունեություններ) գործընթացների կազմակերպման աշխատանքների իրականացումը.
2. կազմակերպում է Գործունեությունների լիցենզավորման հայտերի, լիցենզիաների վերաձևակերպման և Գործունեությունների իրականացման վայրերի փոփոխման հայտերի ուսումնասիրությունն ու դրանց՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը պարզելը և դրանից բխող աշխատանքների իրականացումը.

3. կազմակերպում է Նախարարությունում գործող՝ լիցենզավորող հանձնաժողովների նիստերի նախապատրաստումը, դրանից և լիցենզավորող հանձնաժողովների եզրակացություններից բխող աշխատանքների իրականացումը.
4. կազմակերպում է Գործունեություններ իրականացնողների կողմից ներկայացված լիցենզավորմանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունն ու դրանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանությունը պարզելու և դրանից բխող աշխատանքների իրականացումը.
5. կազմակերպում է Գործունեությունների իրականացման լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանի վարման աշխատանքները.
6. կազմակերպում է Գործունեությունների լիցենզիաների մասով էլեկտրոնային գրանցամատյանում փոփոխությունների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրանք այլ պետական մարմիններին տրամադրման աշխատանքները.
7. կազմակերպում է Պարտադիր պահանջներ կամ պայմաններ սահմանող իրավական ակտերի ցանկում տեղ գտած փոփոխությունների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Գործունեություններ իրականացնողներին հայտնելը.
8. կազմակերպում է Գործունեությունների լիցենզիաներ տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու չափով պետական տուրքի գանձումը.
9. կազմակերպում է Նախարարությանն ուղղված՝ Գործունեություններ իրականացնողների լիցենզավորմանը վերաբերող դիմումների ուսումնասիրության և դրանց համապատասխան ընթացք տալու աշխատանքները.
10. կազմակերպում է Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակման աշխատանքների իրականացումը.
11. կազմակերպում է քաղաքացիներից, կազմակերպություններից, պետական կառավարման համակարգի մարմիններից, պետական և ոչ պետական այլ մարմիններից ստացվող՝ Վարչության գործառույթներին վերաբերող դիմումների ուսումնասիրության և դրանց համապատասխան ընթացք տալու աշխատանքները.
12. կազմակերպում է վիճակախաղերի կազմակերպիչների կողմից ներկայացված գովազդի բովանդակությանը համաձայնություն տալու վերաբերյալ դիրքորոշման ներկայացման աշխատանքները.
13. կազմակերպում է շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատան կազմակերպիչների կողմից հաստատված՝ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև վիճակախաղերի կազմակերպիչների կողմից վիճակախաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգերին (այսուհետ՝ Կանոնակարգեր) համաձայնություն տալու վերաբերյալ դիրքորոշման ներկայացման աշխատանքները.
14. **կազմակերպում է համաձայնեցման ներկայացված Կանոնակարգերը՝ դիրքորոշման հետ միասին Նախարարությունում գործող՝ լիցենզավորող հանձնաժողովի քննարկմանը**

ներկայացման և լիցենզավորող հանձնաժողովի եզրակացություններից բխող գործառույթների իրականացման աշխատանքները.

15. կազմակերպում է շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների, վիճակախաղերի կազմակերպման գործունեություններ իրականացնող լիցենզավորված անձանց կողմից հերթական տարեկան պետական տուրքերի վճարման, ինչպես նաև ինտերնետ շահումով խաղի, տոտալիզատորի (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորի) կազմակերպման գործունեություն իրականացնելու դեպքում խաղադրույք ընդունելու իրավունք (այսուհետ՝ խաղադրույք ընդունելու իրավունք) ձեռք բերելու համար վճարվող պետական տուրքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքները.
16. կազմակերպում է Գործունեությունների իրականացման ապահովման համար, լիցենզավորված անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների իրականացում՝ դրանց արդյունքներով պայմանավորված աշխատանքների իրականացումը.
17. կազմակերպում է Գործունեություններ իրականացնող անձանց կողմից թույլ տրված կասեցման և դադարեցման վերաբերյալ վարչական վարույթների գործընթացի ապահովման և դրանց արդյունքներով պայմանավորված խախտումների հաշվառման աշխատանքները.
18. կազմակերպում է խաղային գործունեության կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու և կազմակերպչի պատասխանատու անձ համարվելու ստուգման միջնորդության, ինչպես նաև ստուգման համար անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ուսումնասիրության՝ ներկայացված տվյալների արժանահավատության ստուգման, դրանց Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանությունը պարզելու և դրանից բխող աշխատանքների իրականացումը.
19. կազմակերպում է խաղային գործունեության կազմակերպչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու և կազմակերպչի պատասխանատու անձ համարվելու ստուգման արդյունքներով պայմանավորված եզրակացությունների տրամադրման աշխատանքները.
20. կազմակերպում է Գործունեությունների խաղադրույք ընդունելու իրավունք ստանալու համար ներկայացված տեղեկացման ուսումնասիրության, դրանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանությունը պարզելու և դրանից բխող աշխատանքների իրականացումը.
21. կազմակերպում է տրված խաղադրույք ընդունելու իրավունքների հաշվառման և օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի պաշտոնական կայքում հրապարակման աշխատանքները.
22. կազմակերպում է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով՝ մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված անձանց վերաբերյալ տվյալների բազայի էլեկտրոնային եղանակով վարման աշխատանքները.
23. կազմակերպում է օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող

կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի վերաբերյալ ստացված տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և ուսումնասիրության աշխատանքները.

24. կազմակերպում է օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման արգելափակման ենթակա կայքերը բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի նախապատրաստման, կազմակերպման, դրանից և հանձնաժողովի եզրակացություններից բխող գործառույթների իրականացման, հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա ընդունված որոշումների և հաստատված ցանկերի հրապարակման աշխատանքները.
25. կազմակերպում է շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման և կատարելագործման աշխատանքները.
26. **կազմակերպում է խաղային բնագավառում նոր գործիքների և տեխնոլոգիաների ուսումնասիրության ու ներդրման աշխատանքները.**
27. կազմակերպում է այլ երկրներում խաղային բնագավառը կարգավորող պետական մարմինների հետ համագործակցության ապահովման աշխատանքները.
28. կազմակերպում է օտարերկրյա պետություններում և ԵՄ անդամ երկրներում խաղային բնագավառում գործող համաձայնագրերին և ասոցիացիաներին անդամակցությանն ուղղված աշխատանքները.
29. կազմակերպում է Նախարարությանը վերապահված ոլորտներում լիցենզավորման գործընթացի իրականացման հետ կապված հարաբերությունների քաղաքականության մշակման և կատարելագործման աշխատանքները.
30. կազմակերպում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը և տեղեկատվության ազատության ապահովումը.
31. կազմակերպում է Նախարարի և Գլխավոր քարտուղարի այլ հանձնարարականների կատարումը:

Իրավունքները

- Գործունեություններ իրականացնող անձանցից, ինչպես նաև պետական մարմիններից պահանջել օրենքով նախատեսված փաստաթղթեր (տեղեկատվություն), ներկայացնել առաջարկություններ, ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ.
- Գործունեությունների լիցենզավորման հայտերում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները չվերացնելու դեպքում ներկայացնել առաջարկություններ հայտերի մերժման վերաբերյալ.

- Գործունեությունների լիցենզավորման հայտերում փաստաթղթերի ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված լինելու դեպքում ներկայացնել առաջարկություններ հայտերի մերժման վերաբերյալ.
- Գործունեությունների լիցենզավորման հայտերի բավարարման դեպքում օրենքով նախատեսված ժամկետում հայտատուի կողմից պետական տուրքը չվճարելու դեպքում ներկայացնել առաջարկություններ հայտը մերժելու և լիցենզավորող մարմնի որոշումը չեղյալ ճանաչելու մասին.
- Գործունեությունների լիցենզիաների վերաձևակերպման և իրականացման վայրերի փոփոխման հայտերում մերժման հիմքերի առկայության դեպքում՝ քննարկումներն իրականացնել լսումների կարգով.
- Նախարարության տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներ.
- առաջարկություններ ներկայացնել Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված հրավիրել խորհրդակցություններ, համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.
- Նախարարության կառուցվածքային այլ ստորաբաժանումներից ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ, անհրաժեշտ հիմնավորումներ, փաստաթղթեր և նյութեր.
- կազմակերպել այլ նախարարությունների և գերատեսչությունների, պետական և ոչ պետական այլ մարմինների հետ համատեղ խաղային ոլորտին առնչվող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ աշխատանքային քննարկումներ.
- համապատասխան մարմիններից ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ, անհրաժեշտ հիմնավորումներ, փաստաթղթեր և օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվություն:

Պարտականությունները

- ուսումնասիրել Գործունեություններ իրականացնող անձանց կողմից ներկայացված լիցենզավորմանը վերաբերող փաստաթղթերի վերաբերյալ առաջարկությունը.
- Գործունեությունների լիցենզավորման հայտերում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում ներկայացնել առաջարկություն թերությունները վերացնելու վերաբերյալ.
- հետևել լիցենզավորող հանձնաժողովների նիստերի աշխատանքների նախապատրաստման և կազմակերպան աշխատանքներին.
- հետևել լիցենզավորող հանձնաժողովի եզրակացություններից բխող գործառույթների իրականացմանը.

- ներկայացնել Գործունեությունների ոլորտը կարգավորող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համապատասխան առաջարկություններ, կազմակերպել Գործունեությունների ոլորտը կարգավորող իրավական ակտերի փոփոխությունների մասին Գործունեություն իրականացնող անձանց տեղեկացնելու գործընթացը.
- հետևել շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման և կատարելագործման, ինչպես նաև խաղային բնագավառում նոր գործիքների և տեխնոլոգիաների ուսումնասիրության ու ներդրման աշխատանքների իրականացման ընթացքին.
- ամփոփել և ներկայացնել համապատասխան մարմիններից ստացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ առաջարկություն, դիրքորոշում, սահմանված կարգով ընթացք տալ համապատասխան մարմինների և քաղաքացիների կողմից Գործունեություններին վերաբերող տեղեկատվության տրամադրման վերաբերյալ դիմումներին.
- հետևել օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրավական ակտերի նախագծերը կարգավորման ազդեցության գնահատման համար համապատասխան մարմիններ ներկայացնելու գործընթացին.
- անցկացնել քննարկումներ՝ իրավական ակտերի նախագծերը պետական-իրավական փորձաքննության ներկայացնելու վերաբերյալ.
- իրականացնել քաղաքացիների ընդունելություն.
- հսկել ինտերնետ շահումով խաղի, տոտալիզատորի (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորի) կազմակերպման գործունեության իրականացման դեպքում խաղադրույք ընդունելու իրավունքի տրամադրման և հաշվառման աշխատանքները.
- հսկել շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման և կատարելագործման, ինչպես նաև խաղային բնագավառում նոր գործիքների և տեխնոլոգիաների ուսումնասիրության ու ներդրման իրականացման աշխատանքներին.
- վերլուծել միջազգային պրակտիկայում գոյություն ունեցող ոլորտը կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրությունների արդյունքները և նախապատրաստել առաջարկություններ.
- ուսումնասիրել համակարգային զարգացման հիմնական միտումների և հիմնախնդիրների վերաբերյալ ամփոփ վերլուծությունները՝ այդ թվում համակարգային հիմնախնդիրների բացահայտման, վերջիններիս վերացման վերաբերյալ, ամփոփել դրանք և ներկայացնել առաջարկություն.
- ուսումնասիրել և ամփոփել համակարգի զարգացմանը խթանող առաջարկությունները և ապահովել դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների մշակումը.
- ամփոփել վերլուծել օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող

կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի վերաբերյալ վերլուծության արդյունքները.

- հետևել օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման արգելափակման ենթակա կայքերը բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման և հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա ընդունված որոշումների և հաստատված ցանկերի հրապարակման աշխատանքների իրականացմանը:
- ներկայացնել հաստատման Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերը, տրամադրել եզրակացություններ և մեթոդական պարզաբանումներ.
- ներկայացնել մասնագիտական դիրքորոշումներ այլ մարմինների կողմից մշակված իրավական ակտերի վերաբերյալ:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1.Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ ֆինանսավարկային կամ իրավունքի կամ լիցենզավորման ենթակա գործունեության բնագավառների չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ

32. Աշխատակազմի կառավարում
33. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
34. Որոշումների կայացում
35. Ծրագրերի կառավարում
36. Խնդրի լուծում
37. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ

38. Բանակցությունների վարում

39. Կոնֆլիկտների կառավարում
40. Ծառայությունների մատուցում
41. Բողոքների բավարարում
42. Ժամանակի կառավարում
43. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
44. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը
Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: